Հավելված
ՀՀ կառավարության 2013 թ.
սեպտեմբերի 5-ի նիստի N 35
արձանագրային որոշման

2012 թ. մայիսի 2-ի ֆինանսավորման համաձայնագրի

<u>Լրացուցիչ ֆինանսավորման համաձայնագիր</u>

2013 թ. հունիս

KfW-ի, Մայնի Ֆրանկֆուրտ

(«KfW»)

և

Հայաստանի Հանրապետության

(«Ստացող կողմ»)

միջև

սույն Լրացուցիչ ֆինանսավորման համաձայնագրի կնքման մասով՝ ի դեմս Ֆինանսների նախարարության (Ֆիննախ), և

Ծրագրի իրականացման մասով՝ ի դեմս Տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի («ՋՏՊԿ» կամ «Ծրագրի իրականացման գրասենյակ»)

550000 եվրոյի համար՝

որը տրամադրվում է Ստացող կողմին Գերմանիայի կառավարության հատուկ հիմնադրամի (ուսումնասիրության և փորձագիտության հիմնադրամ) կողմից «IWRM/Ախուրյան գետ» ծրագրի շրջանակներում մատուցվելիք փորձագիտական ծառայություններ իրականացնելու նպատակով:

Գերմանիայի կառավարության կողմից 2013 թ. մայիսի 29-ին տրված լիազորագրի և Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս Ջրային տնտեսության պետական կոմիտեի (ՋՏՊԿ կամ Ծրագրի իրականացման գրասենյակ) խնդրանքի հիման վրա Ստացողը կողմը և KfW-ն սույնով կնքում են հետևյալ Առաջին լրացուցիչ Ֆինանսավորման համաձայնագիրը:

Բաժին 1

Ֆինանսավորման համաձայնագրի փոփոխություն

2012 թ. մայիսի 2-ի Ֆինանսավորման համաձայնագրի հետևյալ դրույթները սույնով ամբողջությամբ փոխվում են և վերաշարադրվում հետևյալ կերպ.

ա) Հոդված 1.1, նախադասություն 1.

EUR 800,000.--."

«KfW-ն Ստացող կողմին կտրամադրի 800000 եվրո չգերազանցող ֆինանսական օժանդակություն:»

բ) Հոդված 1.2.

«Ստացող կողմը ֆինանսական օժանդակությունը պետք է օգտագործի բացառապես 2012 թ. դեկտեմբերի «Խորհրդատվական ծառայությունների մրցույթի պայմաններ»-ում («Փորձագիտական ծառայություններ», Հավելված Ա, «Առաջադրանքի պայմաններ») սահմանված խորհրդատվական ծառայությունների I («ՋՌՀԿ/ Ախուրյան գետ, Փուլ 1», տեխնիկա-տնտեսական հիմնավորման ուսումնասիրության արդիականացում) և V (Ախուրյանի գետավազանի կառավարման պլան) կետերի շրջանակներում պլանավորված տեխնիկա-տնտեսական հիմնավորման ուսումնասիրությունների (Հավելված 3) և, հիմնականում, օտարերկրյա փոխանակման ծախսերը վճարելու համար: Ֆինանսական օժանդակությունից մեքենաներ չեն կարող ֆինանսավորվել:»

գ) Հոդված 2.4.

«KfW-ն իրավունք ունի հրաժարվել վճարումներ կատարելուց 2013թ-ի դեկտեմբերի 30-ից հետո:»

Բաժին 2

Ֆինանսավորման համաձայնագրի վավերության շարունակում

Ֆինանսավորման համաձայնագրի մյուս բոլոր դրույթները մնում են անփոփոխ:

Բաժին 3

Սույն համաձայնագրի դադարեցումը

Սույն Առաջին լրացուցիչ ֆինանսավորման համաձայնագրով հաստատվող իրավական հարաբերությունները KfW-ի և Ստացող կողմի միջև դադարում են Ծրագրի ժամկետի ավարտից հետո, սակայն Առաջին լրացուցիչ ֆինանսավորման համաձայնագիրը ստորագրելուց հետո ամենաուշը 15 տարուց հետո:

Բաժին 4

Տերմինների ներառումը

Ֆինանսավորման համաձայնագրի հոդված 5-ի (*Պայմանագրային դրույթներ և ներկայացուցչական իրավունք*) և հոդված 8-ի (*Այլ դրույթներ*) դրույթները ներառվում են սույն Առաջին լրացուցիչ ֆինանսավորման համաձայնագրում նույն ձևով, եթե դրանք ամբողջությամբ սահմանված լինեին սույն Առաջին լրացուցիչ ֆինանսավորման համաձայնագրում, և այդ հոդվածներում վկայակոչումները «սույն Համաձայնագրին» վկայակոչում են նաև Առաջին լրացուցիչ ֆինանսավորման համաձայնագրին:

Կազմված է երեք բնօրինակից՝ անգլերեն լեզվով

Մայնի Ֆրանկֆուրտ

____ հունիսի, 2013 թ.

_____

KfW

Երևան

____ հունիսի, 2013 թ.

_____

Հայաստանի Հանրապետություն՝
ի դեմս Ֆինանսների նախարարության

Երևան

____ հունիսի, 2013 թ.

_____

Հայաստանի Հանրապետություն՝ ի դեմս ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի

<u>Հավելված 3.</u>
Մրցույթի պայմաններ